



2002-2005թթ. ընթացքում Հայաստանում գործարար միջավայրի, արտադրողականության և մրցունակության իրավիճակը

Ջուզեպե Իարոսի, Ֆեդերիկա Սալիոլա, Ջիովաննի Թանգիլո

Համառոտագիր

Վերջին տարիներին արձանագրած զգալի տնտեսական ձեռքբերումները երկարաժամկետ կտրվածքով ոչ կայուն բնույթ կկրեն, եթե բարեփոխումներ չիրականացվեն ներդրումների ոլորտում: Օգտագործելով Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի 8800 անհատ ձեռներեցների հարցումից ստացված տվյալները՝ կատարվել է տարածաշրջանի 23 այլ երկրների ներդրումային միջավայրերի հետ Հայաստանի ներդրումային միջավայրի համեմատություն և սահմանվել են այն գործոնները, որոնք վերջին երեք տարիների ընթացքում հանգեցրել են Հայաստանի գործարար միջավայրի վատթարացմանը: Հստակեցվել են մասնավոր սեկտորի զարգացման հիմնական խոչընդոտները և դրանց ազդեցությունը ձեռնարկության գործունեության վրա: Տվյալները փաստարկում են, որ Հայաստանում արտադրողականության աճի հիմնական խոչընդոտները կապված են բյուրոկրատիայի, կաշառակերության և գործարար սեկտորի համար ֆինանսական միջոցներ ստանալու մատչելիության հետ: Հոդվածում ներկայացված են նաև ըստ առաջնայնության բարեփոխումների իրականացման ուղիները, ինչպես նաև Հայաստանի մրցունակության համեմատությունը տարածաշրջանի այլ երկրների հետ: Համաձայն կատարված վերլուծության, Հայաստանում ձեռնարկությունների գործունեության վրա բացասաբար ազդող ներդրումային միջավայրի հիմնական խոչընդոտը բյուրոկրատիան է: Վերլուծության արդյունքում պարզվել է նաև, որ երկարատև ֆինանսավորման աղբյուրների մատչելիությունը բանկային վարկավորման և առևտրային վարկերի առումով կնպաստի Թուրքիայի համեմատ Հայաստանի 40% արտադրողականության բացի լրացմանը: